չատակէ Ս. Յակոբի վանքին եւ նոյն ձեռագրին մէջ (ՄՁ. Թ. 174) կը գրէ հետեւեալ յիշատակարանը. «. . . Մեսրոպ բանի սպասաւոր Բաղիշեցի, սկսեալ զսբ. աւետարանս գրեցի ես եւ տէր Սահակ վարպետն. ծաղկեալ ոսկով և տնօրինականօք զարդարեցի ըստ կարի մերում. և բերեալ զսբ. աւետարանս ի սբ. քաղաքս Երսմ. և եդի յիշատակ զսա ի դուռն սբ. Յակոբայ ինձ և ծնողացս և տէր Սահակին, որ հանգուցեալ է առ քս. և բազում աշխատեալ առ մեզ։ . . . որ զսբ. աւետարանս ետու ի դուռն սբ. Յակոբայ, ի թվին Հայոց ՌՂԲ...» (=1643) (Խաչ. Ցուց. տետր ժե. էջ 1187)։ Ս. Յակոբայ վանքին նուիրած իր յիշատակները տեսնել (ՄՁ. Թ. 532)։

ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ԳԱԼԹԱՔՃԵԱՆ, ՆԱՐԵԿՑԻ. — Մբ. Ծ. 1834 ին. Զա. 1866 ին. ՏՊ. (1869 — 71). Հիւբընկալ 1871 ին. ՏԴ. (1873—74). կը պաշտօնավարէ Կիպրոսի մէջ 1874ին. ՏԲ. 1875 ին. Բ. անգամ ՏԴ. (1881—83). 1873 ին ընդօրինակած է Կարապետ պտրք.ի Տարեկան fարոզք գիրքը։

ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ԳԱԼՋԸՆՃԵԱՆ, ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ. — Մբ. կնիքը 1824. ՏՑՊ. 1838ին. Այնթապցի Յովսէփ սրկ.ի հետ վանական գործով ճիտտէ կ'երթան 1847ին. խորհրդական 1850ին. Յոպպէի վանքին աւագ դրան նաեւ ուղղակի եւ սանդուխներու վերին աստիճանի կամարին վրայ, Մեսրոբ վրդ.ի մասին գրուած է հետեւեալ յիշատակարանը. «ի Պատրիարքութեան Տ. Գաբրիէլի Արքեպիսկոպոսին. ի վայելումն եւ յիշատակ ազգիս Հայոց. Յոպպէի Ս. Նիկողայոսի վանքն նորոգեցաւ ի դրանէ մինչև ցվեր գեղեցիկ սենեկօք. ձեռամբ և աշխատութեամբ Տիգրանակերտցի Մեսրոբ վրդ. ըէիզին, յամի տեառն 1840»։ Կը վախճանի 1858ին եւ կը թաղուի Սիոնի գերեզմանատունը. հետեւեալն է իր տապանագիրը.

«Ա՛ծ իմ.
Ողորմեա և լուր ձայնի մաղթանաց իմոց.
Եդայ ի չիրիմիս պաշտօնասատար
Սրբոյ աթոռոյ Երուսաղէմի
Տիգրանակերտցի Գալչընճեանց Մեսրոպ
վարդապետս Կարապետեան։
Ո՛հ մնամ ակնապիշ կարօտ ողորմութեան
1858 Ցնս. 29.»